ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մեկուկես տարի առաջ ակադեմիական ինստիտուտները տեղափոխեցին խոստանալով բարելավել աշխատանքի պայմանները

ՇԵՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԸ ԲԱԺԻՆ ՀԱՍԱՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ինստիտուտին: Այստեղ տեղավորված էր նաեւ Պետռեգիստրը, որն «օր առաջ» դեռեւս 2006 թ. պետք է ազատած լիներ շենքը: Տնտեսագիտության ինստիտուտի տեղափոխությունից հետո անցել է մեկուկես տարի, բայց աշխատատեղերի մակերեսի անբավարարությունը մնացել է չլուծված: Պետռեգիստրն այսօր էլ այնտեղ է, ավելին, մոտ ապագայում նրա տեղափոխման որեւէ նշան չի նկատվում: Մինչդեռ Տնտեսագիտության ինստիտուտի աշխատակիցների թիվը էապես ավելացել է: Այս տարվա մարտին ՀՀ կառավարության որոշմամբ այդ հաստատության կազմի մեջ մտան Գյուղատնտեսության տնտեսագիտության ինստիտուտը, Տնտեսական բարեփոխումների եւ կառավարման ինստիտուտը եւ Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտը: **Թվում էր, թե միավորված տնտեսագիտական կենտրոնի ստեղծումով նախատեսվում է նաեւ աշխատատեղերի մակերեսի հարցը: Բայց, ինչպես երեւում է, ծեռքները դրան չհասավ:**

-ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի տեղափոխության ժամանակ 44 աշխատակից ունեինք, միավորվելուց հետո դարձան 145,- պատմում է ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն Վլադիմիր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ:- Բայց բանի որ մարդկային ռեսուրսների տարածքային միավորումը տեղի չունեցավ: Մեր կազմի մեջ մտած հաստատությունները մնացին նախկին տեղերում, ինչը, բնական է, գիտական աշխատանքի կազմակերպման շատ լուրջ խնդիրներ է ստեղծում: Ինստիտուտների սարքավորումներն ու գույքը նորացման կարիք ունեն: Օրինակ՝ նախկին Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտին բաժին հասավ ընդամենը մեկ փոքրածիշ: Ինչպես նախկին Տնտեսական բարեփոխումների ինստիտուտին, սառնարան, երկու համակարգիչ, մի քանի աթոռ եւ 4000 միավոր մասնագիտական գրականություն, որը անհրաժեշտ է ինչ-որ կերպ տեղավորել: Անկեղծ է, որ նման ավելի քան հարյուր տնտեսությամբ զբաղվող աշխատանք կազմակերպելը շատ դժվար է արդյունավետ աշխատանք կազմակերպելը: Եվ արժե՞ խոսել տեխնիկայի, ժամանակակից համակարգիչների մասին, եթե այսօր ի վիճակի չենք մեր նոր աշխատակիցներին անգամ աշխատելու տեղ տրամադրել: Միավորման դրական արդյունքներ առայժմ չենք տեսնում, փոխարենը հոգսերն են շատացել՝ հարկերի վճարման, աշխատավարձի վճարման, պարտքերի մարման պարտավորությունները եւ այլն:

Օպտիմալացման եւ միավորված ինստիտուտների հաստիքների կրկնակման հետեւանքով լուրջ կրճատումներ են կատարվել, մասնավորապես կրճատվել են նախկին անկախ ինստիտուտների փոխտնօրենները, գիտքարտուղարները, ասպիրանտուրայի բաժնի վարիչները,- նշում է Վլադիմիր Հարությունյանը:- Բացի դրանից, ինստիտուտների աշխատակիցների մի մասը հրաժարվեց աշխատել նոր պայմաններում եւ գրվեց առեւտրային կառույցներում: Այսուհանդերձ միավորված ինստիտուտի գիտական ներուժը բավական մեծ է: Մենք 1 ակադեմիկոս ունենք, 1 թղթակից անդամ, 14 դոկտոր եւ 32 գիտությունների թեկնածու: Տնտեսագիտության ինստիտուտի բազային եւ թեմատիկ ֆինանսավորման միջոցներով հետազոտություններ են կատարվում 28 գիտական ուղղություններով: Տարվող հետազոտությունների համալիրը հնարավորություն է տալիս ստանալու Հայաստանի տնտեսության ամբողջական պատկերը, իսկ հետազոտությունների արդյունքները, հուսով եմ, կօգտագործվեն պետական որոշումներ ընդունելիս եւ տնտեսության զարգացման ռազմավարությունը մշակելիս: **Այդ առումով, անկասկած, ինստիտուտների միավորումը դեր կխաղա, կնպաստի մակրոտնտեսական նշանակության խնդիրների լուծմանը: Սակայն ճանի դեռ բնականոն աշխատանքի համար պայմաններ ստեղծելու խնդիրը չի լուծվել, հազիվ թե կարողանանք հաջողությամբ հաղթահարել ինստիտուտի առջեւ ծառացած խնդիրները,- ասաց Վ. Հարությունյանը:**

ՇԱՏ ԱՎԵԼԻ ԴԺՎԱՐԻՆ ՎԻՃԱԿՈՒՄ Է ՀԱՅՏՆՎԵԼ ՀՀ ԳԱԱ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ: Նոր վայր տեղափոխվելուց հետո հաստատությունը, որ զբաղվում է առաջնահերթ ուղղությունների հետազոտություններով, հայտնվեց նոր շենքի 1-ին հարկի երեք սենյակում: Եթե հաշվի առնենք, որ այդ ինստիտուտն ունի 66 աշխատող, որոնցից 48-ը գիտաշխատողներ են, ապա չափազանց բարդ է պատկերացնել նրանց այդ երեք սենյակներում տեղավորելու հնարավորությունը: Գումարած մութ, խոնավ, հին կահույքով լցված միջանցքը: Գիտական ստեղծագործության համար պայմանները հեռու են տանելի նվազագույնից:

- Ինստիտուտի ղեկավարությունն ամեն ինչ անում է, որ մեր աշխատակիցները կարողանան աշխատել տանը կամ գրադարանում: Անհրաժեշտության դեպքում նույնիսկ աշխատակիցներին ենք տրամադրում մեր ինստիտուտի համակարգիչները,- ասաց Լեզվի ինստիտուտի տնօրեն Լավրենտի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ:

Գիտական գործունեության ոլորտում «տնայնագործությունը», ավաղ, սովորություն է դարձել: Մերթ ծեռային գրտերն ու ջեռուցման բացակայությունն են ակադեմիայի աշխատակիցներին տուն քշում, մերթ չմտածված օպտիմալացումը: Սակայն դժվար է երեւակայել, որ գիտական աշխատանքի նման կազմակերպման դեպքում կարելի է լուրջ արդյունքներ ստանալ, անգամ հումանիտար գիտությունների բնագավառում:

Ցավոք, Գիտությունների ակադեմիայում կատարվող օպտիմալացման արդյունքները կրկին ու կրկին հարուցում են չարաբաստիկ հարցը. այնուամենայնիվ պե՞տք է Հայաստանին գիտություն: Եվ եթե համենայն դեպս պետք է, ապա մինչեւ ե՞րբ է գիտությունը ծաղկելու չմտածված եւ անհեթեթ որոշումների հետեւանքները:

Բորիս ԲՈՒԴՈՒՄՅԱՆ